

## 10. ԴԵՂԻՆ ՎԱՐՂԵՐ

Փթթեցէ՛ք միշտ, դեղին վարդեր, լքուա՛ծ վարդեր,  
խորհրդանիշն առանձնացած հոգիներու.

Միշտ կը յուզէք դուք իմ հոգիս խռովքով մ'աղու,  
Անյուսութեան դալուկն հագած տժգոյն վարդեր:

Անյուսութեան դալուկն հագած տժգո՛յն վարդեր,  
Չձեզ յաւէտ պիտի սիրեմ ես սրտագին.

Ու միշտ սիրել պիտի չուզէ իմ դառն հոգին,  
Կարմիր ու ձիւն ճերմակ վարդերն ուրախաբեր:

Կարմիր ու ձիւն ճերմակ վարդերն ուրախաբեր  
Եւ Սուր հեզնանք մը ցաւով ճմլած հոգիներու,  
Ինձի երբեք անոյշ հրապոյր մը չեն ազդեր...

Եւ Կոյս ու զուարթ երանութեամբ օծուած վարդեր,  
Երգեցէ՛ք միշտ ընկճըւածի երգերն աղու,  
Լքուած հոգուոց դուք մըտերիմ, տժգո՛յն վարդեր:

1902, Մայիս

## 11. ՅԻՇԱՏԱԿ

Գիշերն է լուռ, մութը պատած է չորս դին.

Մըտածում մը կը սաւառնի վեր, ետին,

Ստուերամած ու մթաքօղ ամպերուն.

Եւ կիսատուած խորհուրդներս թել կ'առնուն.

Մտածում մը կը սաւառնի վեր, հեռո՛ւն,

խորհրդաւոր քօղարկումի մութին տակ.

Ու աչքերս խորհրդամած, սեւեռուն,

Բիւր խորհուրդներ կը բերեն ինձ անյատակ.

խորհրդաւոր քօղարկումի մութին տակ

Լուռ անձկութիւն մը կը պրկէ գիս յանկարծ.

Կ'արթըննայ մեջըս բիւրաւոր յիշատակ: